

## **ԱՌՆԵԼ ԲԱՅԻ ԴԱՐՉՎԱԾԱԿԱԶՄԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

**Բ. Գ. Ք., դոց. Ա. Ճ. ՊՈՂՈՍՅԱՆ**

Ժամանակակից հայերենում *առնել* բայով կազմված դարձվածքների թիվը մոտ երեք հարյուր է: Դրանք և՛ երկբաղադրիչ, և՛ եռաբաղադրիչ, և՛ բազմաբաղադրիչ կապակցություններ են:

**Երկբաղադրիչ կապակցություններ:** Սրանցում *առնել* բայի հետ կառույցներ են կազմում՝

1. գոյականը՝

1.1. ուղղական հոլովով<sup>1</sup>. օրինակ՝ *ազդ առնել, դաս առնել, գեներ առնել, ծեռքն առնել, շունչ առնել, տարիքն առնել, ուսում առնել* և այլն: Այսպես՝ Իշխան Ընծակը մածունի մասին *ազդ առավ* պատահաբար (ՀԽԵՍ – 135-136): Մեկ-մեկ հանգիստ են տալիս տասը թուպեով՝ ծխելու, «*շունչ առնելու*» համար (ՀՄԱԶՀ1 – 439): Վարպետ Գրիգորը, որ *տարիքն առած* մի բարի, ուրախ և առակախոս մարդ էր, սիրով ընդունեց Հարութին.... (ԱԻԵԺ4 – 464):

*Առնել* բայի հետ ուղղական հոլովով գոյականը կարող է կապակցություններ կազմել՝

1.1.1. որոշյալ առումով. օրինակ՝ *աչքն առնել, բերանն առնել, գիրկն առնել, թևն առնել, համն առնել, հոգին առնել* և այլն: Ինչպես՝ Ամեն անգամ, երբ մեքենայից իջնելիս *աչքն առնում է* դռների մոտ մլուկ տվող Մալյուսինկային, նրան թվում է, թե ինքը դեռ հարբած է.... (ԱԵ1 – 164): ....նա ո՛չ ծխում էր, ո՛չ էլ մի կաթիլ խմիչք *բերանն առնում*.... (ԱԻԵԺ4 – 449): ....նրանք քիչ հետո միասին են թռչելու, գնալու են նույն քաղաքը, բացելու են նույն տան դուռը և կարոտած իրենց *գիրկն են առնելու* գանգուր մագերով նույն մանկիկներից (ՎՊԸԵ1 – 77): Դանիելբեկը նրա *թևն առավ* և քաշեց մի կողմ.... (ԲՈՒՄ – 139):

1.1.2. Անորոշ առումով. օրինակ՝ *արև առնել, երես առնել, լեզու առնել, կին առնել, հարություն առնել* և այլն: Այսպես՝ Բայց տուն էինք գալիս, ու մի քիչ բացված էր լինում. – Իմ ճժեր *արև առան*, գարնան արև անուշ է (ԱԵ1 – 17): Թող թիթը փշրի Երևանի ժայռերին, հետո ես կիմանամ, թե ինչպես կխոսես այս *երես առած* ավանակի հետ (ԱՄՄՍ – 351): Բայց հենց որ նա այդ խոսքերն էր ասում, ավերակները կարծես տեղահան էին լինում, շարժվում, *լեզու առնում* և ամեն մի քարի,

<sup>1</sup> *Առնել* բայով դարձվածային միավորների կեսից ավելին կազմված է «բայ + ուղղական հոլովով գոյական» կաղապարով:

ամեն մի ավերակի տակից կանչում.... (ԲԱԱԵԱԿ – 452): Դա Այգեստանի հռչակավոր տատմերն էր ու հեքիմը, որի ձեռքի տակ, ինչպես ասում են, մեռելը *հարություն էր առնում* (ԶԴԱԿ – 68):

Որոշյալ առման ցուցիչը՝

ա) կարող է փոխել դարձվածքի իմաստը: Ինչպես՝ – է՛հ, Մարո ջան, իմ սրտիցն արյուն է գնում, իսկ դու ինձ *ծեռ ես առնում*,– տխրությամբ ավելացնում է Արշակը (ՀՄԱԶՅ1 – 33): և՛ Երվանդը ավարտեց իր պատմությունը և *ծեռն առավ* թեյի վեցերորդ բաժակը (ԱԻԵԺ4 – 47): Առաջին նախադասության *ծեռ առնել* կապակցությունը նշանակում է *ծաղրել*, իսկ երկրորդի *ծեռքն առնել* կառույցը գործածվել է *վերցնել* նշանակությամբ:

Այլ օրինակ. Զգուշությամբ դուռը բացեցին....և *սիրտ առնելով* դուրս ելան այրից (ՎԱԵ – 374): և՛ ....բայց մարդ չպետք է իրեն այդպես կեր դարձնի ուրիշի վշտին և ուրիշի *սիրտն առնելու* համար իրեն այդպես ոչնչացնի.... (ՀՄՏ – 156): *Սիրտ առնել* կառույցի իմաստն է՝ *համարձակվել*, իսկ *սիրտն առնել* կապակցությունը ունի *սիրաշահել* նշանակությունը: Նույն կերպ նաև՝ *թև առնել* (ոգևորվել) և *թևն առնել* (թևը բռնել, թևանցուկ անել), *ծեռք առնել* (ծաղրել) և *ծեռքն առնել* (վերցնել) և այլն:

բ) Որևէ մոր իմաստ կապակցությանը չի հաղորդում: Այսպես՝ Ղեոտ կինը *լուր առավ*, որ ամուսինը խամ ու խոպանից եկել է.... (ՄԳԲ – 42): և՛ թիմարի արյունահեղ դիմադրության *լուրն առնելով* կուսակալ Զևդետ բեյը շտապեց Վան վերադառնալ (ԶԴԱԿ – 353): Ե՛վ առաջին նախադասության *լուր առավ*, և՛ երկրորդի *լուրն առավ* կապակցությունները գործածվել են *տեղեկանալ* իմաստով:

Ուրիշ օրինակ. Եթե ոչ բուն առևտուրը, ապա նրա հոգեբանությունն *սկիզբ էր առնում* այստեղից.... (ԶԴԱԿ – 41): Իսկ ահագանգը, որ *սկիզբն առավ* մայր տաճարից, որպեսզի ոտքի հանի միաբանությանը, տարածվեց, գնաց հասավ մինչև Արագածոտն, Սևան, Սյունյաց աշխարհի հեռավոր լեռները, որպեսզի հայոց ժողովուրդը ոտքի ելնի փրկելու իրեն (ՀՄԱԶՅ1 – 431): *Սկիզբ առավ* և *սկիզբն առավ* դարձվածքները ունեն նույն՝ *սկսվել* իմաստը: Այսպես են նաև՝ *վրեժ առնել* և *վրեժն առնել* (վրեժը լուծել, հատուցել), *հոտ առնել* և *հոտն առնել* (իմանալ, տեղեկանալ) և այլն:

1.2. Տրական հոլովով. օրինակ՝ *բաշին* առնել, *գրի* առնել, *թևին* առնել, *կնության* առնել, *հաշվի* առնել, *պատվի* առնել, *ուշադրության* առնել և այլն: Ինչպես՝ Ես *գրի եմ առնում* այն, ինչ նա պատմում է, որպեսզի լրացնեմ իմ հիշատակարանը (ՀՄԱԶՅ2 – 573): Բաց պատուհանից մտավ քամին....Պարզվեց դեպի գրասեղանը, *թևին առավ* այնտեղ ընկած լրագիրն ու խաղում է (ԱԵ1 – 326): Ինձ *կնության առնելու* համար դու պետք է գնաս Քարենի և առնես ծնողներիս համաձայ-

նությունը (ՀխԵՍ – 261): ...նույնիսկ խոհարար Յուսիկն էլ *հաշվի չէր առնում*, որ իր հետ խոսում են...արքայական թվանքչիներ (ՀԴՈԵ – 6):

Այս դեպքում որոշյալ առման ցուցիչը դեր չի խաղում, որովհետև գոյականը հանդես է գալիս կա՛մ որոշյալ, կա՛մ անորոշ առումով:

1.3. Բացառական հոլովով<sup>1</sup>, օրինակ՝ *առաստաղից* առնել, *բերանից* առնել, *ծեռից* առնել, *ծեռքից* առնել և այլն: Այսպես՝ Վրա տվեք, ջարդեցեք ֆլաներին, *ծեռներիցն առեք* (ՀՄԱԶՅ1 – 196): ...տավարի ֆերման մի անտեր կթվորուհու ցամակով ու առերես բողոքով գործկոնը *ծեռքից առել էր...* (ՀՄԵ2 - 335):

Այլ հոլովաձևերով գոյականը *առնել* բայի հետ կապակցություններ մեզ չեն հանդիպել:

2. Ածականը. օրինակ՝ *անտես* առնել, *աջն* առնել, *մաքուրի* առնել, *պաղ* առնել, *ցուրտ* առնել և այլն: Ինչպես՝ Իսկ նա, Հրեղենը, կինը – կսիրե ու գերի կդառնա նրան, ով *անտես կառնի* նրա սիրունությունը... (ԱԻԵԺ4 – 477): Ընդունվում է ռազմահեղափոխական կոմիտեի քաղաքական հայտարարության տեքստը, որ *մաքուրի են առնում* և կցում արձանագրությանը (ՀՄԱԶՅ3 – 516): ...Մալաքը որևէ բանով պիտի ծածկեր նրա ուսերը, որպեսզի ծերունու թիկունքը *պաղ չառներ* (ԱԵ1 – 77):

3. Դերանունը. օրինակ՝ *իրար* առնել, *իրենն* (*հմը*, *քոնը*) առնել և այլն: Այսպես՝ Նա *իրենն առավ*. այլևս չի խառնվի ուրիշների գործերին<sup>2</sup>:

4. Մակբայը. օրինակ՝ *առաջն* առնել, *դեմ* առնել, *մեջտեղ* առնել և այլն: Այսպես՝ Սակայն այս անգամ էլ նրանք *դեմ առան* քաղաքը պաշտպանողների անհողողող դիմադրությանը (ԶԴԱՎ – 467): Սրանցից մի խումբ *մեջտեղ են առել* էշ Սերգոյին և «Սև շանը» ու լավ «տեսնում են» կամ, ինչպես ասում էին բանտում, «քուֆթա են շինում» (ՀՄԱԶՅ3 – 740):

5. Ինքնուրույն գործածությունից զուրկ ձևերը. օրինակ՝ *զանց* առնել, *կանգ* առնել, *հանձն* առնել, *փոխ* առնել և այլն: Ինչպես՝ ...թուրքերն իրենց պատերազմական պատրաստություններում գրեթե *զանց էին առնում* Քաղաքամիջի հայերի դիմադրության հնարավորությունը (ԶԴԱՎ – 474): Ներքև ու վերև արեցին և եկան ու *կանգ առան* Ակոռի գյուղից ոչ հեռու գտնվող մի գորշ զանգվածի առջև (ՀխԵՍ – 392): Մի քանի հոգի *հանձն են առնում* կարճ ճանապարհով տանել մեզ մինչև Ախլաթյան (ՀՄԱԶՅ2 – 649): ...հիմա երկու ոտ էլ ուրիշից *փոխ առ*, ականջներդ փակիր ու փախիր, ընկեր Մամիկոնյան (ՀՄՍ – 260-261):

Երկբաղադրիչ վերոբերյալ բոլոր տիպի կապակցություններում *առնել* բայը հանդես է գալիս որպես կառույցի հիմնական բաղադրիչ, որին լրացնում է կա-

<sup>1</sup> Այսպիսի կառույցները հազվադեպ են հանդիպում:

<sup>2</sup> Բնագրային օրինակների չենք հանդիպել:

պակցության երկրորդ անդամը:

Խիստ հազվադեպ հանդիպում են երկու համազոր բայերից կազմված համադասական հարաբերությամբ կառույցներ՝ *տալ-առնել*<sup>1</sup>, այսպես՝ Բարեկամները շատ *տվին-առան*, վերջը եկան այն մտքին, որ ինչ գնով ուզում է լինի Ձեյնաբ խանումին պետք է վերացնել մեջտեղից (ՁԴԱՎ – 386): Մեր մտքում *տվինք-առանք* ու չկարողացանք ներող լինել... (ՅՍՍ – 280):

**Յոթադարիչ կապակցություններ:** Քանակով սրանք զգալիորեն զիջում են երկբարդիչ կառույցներին: Այսպիսի դարձվածային միավորներում *առնել* բայը կակակցություն է կազմում հետևյալ կառույցների հետ՝

1. ուղղական հոլովով (որոշյալ առումով) գոյական + ուղղական հոլովով (որոշյալ առումով) գոյական. օրինակ՝ *արյունն աչքն* առնել, *ինչպես՝ Անօրենը, արյունն աչքն առած*, մարդակալ վիշապ, եկել կալել ու կապել էր ու կգարկեր, կթալաններ, կսպաներ (ԱԵ1 – 64):

2. Ուղղական հոլովով (որոշյալ առումով) գոյական + ուղղական հոլովով (անորոշ առումով) գոյական. օրինակ՝ *արյունը կրակ* առնել, *բերանը ջուր* առնել, *գնդակը գետին* չառնել, *մեջքը գետին* չառնել, *սիրտը դող* առնել, *սիրտը լեզու* առնել և այլն: Այսպես՝ Ֆերմանը որ կարդում է, Ձիլի Սուլթանի *արյունը* բարկությունից *կրակ է առնում...* (ԱԵԺԺ4 – 125): Ձմռանը, երբ գրասենյակում ծխում էին ու գրուցում, Ներսոն *բերանը ջուր առած* նստում էր (ՄԳԲ – 33): – Յըն... Մշո սուրբ Կարապետ վանքի միաբան եղիշե վարդապետն է, էնոր *գնդակը գետին չի առնի*, – պատասխանում է գաղթականը (ՅՍԱԶՅ1 – 429):

3. Ուղղական հոլովով (անորոշ առումով) գոյական + ուղղական հոլովով (անորոշ առումով) գոյական. օրինակ՝ *միջոցներ ձեռք* առնել, *ինչպես՝ Ես անձամբ ձեռք կառնեմ* բոլոր *միջոցները*, որպեսզի իմ զինվորների կողմից որևէ բռնություն կամ անկարգություն տեղի չունենա (ԲՈՒՄ – 97):

4. Ուղղական հոլովով (անորոշ առումով) գոյական + ուղղական հոլովով (որոշյալ առումով) գոյական. օրինակ՝ *աստված հոգին* առնել, այսպես՝ Ասում են, թե սա տերտերների պես աղոթում է, որպեսզի *աստված* ունևորների *հոգին* շուտ *առնի* ու ինքը հաց ունենա (ՅՍԱԶՅ2 – 237): «Գառի պես տղա էր, – հեծկլտալով ասում էր կինը, – մեկ էլ ի՞նչ եղավ, ի՞նչ չեղավ, կես գիշերին դիվոտավ, ու էն օրվանեն կիսնե, կուգա գլուխս կկանի, *հոգիս էլ չի առնի աստված*, որ պրծնեն էս տարտարոսեն...» (ԱԵԺԺ4 – 455):

5. Ուղղական հոլովով (որոշյալ առումով) գոյական + տրական հոլովով գոյական. օրինակ՝ *աչքը աչքին* չառնել, *ոտները գետին* չառնել, *ոտքը քարին* առնել և այլն: Ինչպես՝ ...մինչև չտեսնեմ, *աչքս աչքին չառնի*, քեֆ չեմ կարող անել...:

<sup>1</sup> Համադասական հարաբերությամբ միայն այս կառույցն է մեզ հանդիպել:

(ԱԻԵԺ4 – 292): Հալիդեն լսել է այդ, և *նոսները գետնին չեն առնում* ուրախություն-նից.... (ՀՄԱԶՅ3 – 301): Հենց այդ վայրկյանին *նոքը քարին առավ*.... (ՎԱԵ – 146):

6. Ուղղական հոլովով (որոշյալ առումով) գոյական + մակբայ. օրինակ՝ *ծեռք վեր առնել*, այսպես՝ ....ինչ անում են, չեն անում, եղ դադաքիցը *ծեռք չես վեր առնում* (ՊՊ – 219):

7. Ուղղական հոլովով (անորոշ առումով) գոյական + մակբայ, օրինակ՝ *ծեռք վեր առնել*, ինչպես՝ ....հենց ուզում են մտքիցս քցիլ, բալքի թե *ծեռք վեր առնիմ*.... (ՊՊ – 95):

8. Տրական հոլովով գոյական + ուղղական հոլովով (որոշյալ առումով) գոյական. օրինակ՝ *աշխարհքի համը* առնել, *հողի համն* առնել, *մահվան շունչն* առնել, *վառողի հոտն* առնել և այլն, այսպես՝ ....բայց, խոսքը մեր մեջ մնա, *աշխարհքի համը* դու *ես առնում*.... (ԱԻԵԺ4 – 190): Հոտաղներից մի երկուսը հետո ուզում են կոխ բռնել հետս, որ «*հողի համն առնեն*» (ՀՄԱԶՅ1 – 7): *Մահվան շունչն առած* հասակավորներ են՝ որ վախեցած կասկածով են նայում գործակատարի գեղջկորեն դանդաղ ու կոպեկը կոպեկին արդար առուտուրին.... (ՀՄՍ – 309): Պապաշայի հրամանով, ջոկերի հրամանատարներ են նշանակվում *վառողի հոտն առած* մարտական զինվորներ.... (ՀՄԱԶՅ1 – 287):

9. Տրական հոլովով գոյական + ուղղական հոլովով (անորոշ առումով) գոյական. օրինակ՝ *արյան հոտ* առնել, *վառողի հոտ* առնել և այլն, ինչպես՝ ....այս խաղաղ առավոտը որտեղից *ես արյան հոտ առնում*.... (ԶԴԱՎ – 221): Կան նաև «Ժորժիկներ», հարուստ տների երես առած լակոտներ, որոնք *վառողի հոտ չեն առել* և սպայական կոչումներ են ստացել իրենց պապաշաների ու մամաշաների կապերի շնորհիվ.... (ՀՄԱԶՅ1 – 89):

10. Տրական հոլովով գոյական + մակբայ, օրինակ՝ *կոկորդին դեմ* առնել, այսպես՝ ....Օսմանյան կայսրության *կոկորդին դեմ առած* դարավոր ոսկորը դուրս էր ընկնելու վերջապես... (ԶԴԱՎ – 665):

11. Բացառական հոլովով գոյական + ուղղական հոլովով (անորոշ առումով) գոյական. օրինակ՝ *ծտից թև* առնել, ինչպես՝ Շուշի՛կ, անմահական խորովածը գնաց-չմնաց, *ծտից թև առ* տեղ հասիր... (ՎԱԵ – 445):

12. Ածական + ուղղական հոլովով (որոշյալ առումով) գոյական. օրինակ՝ *բարի լույսն* առնել, այսպես՝ ....փողոցներում մեկը չկա, որ մայրիկի *բարի լույսն առնի*.... (ԱԵ1 – 462):

13. Դերանուն + ուղղական հոլովով (անորոշ առումով) գոյական. օրինակ՝ *իրար սիրտ* առնել, ինչպես՝ Թող այս անսովոր նշանդրեքին վկա լինեն մեր սուրբ լեռները, այս աղբյուրը, այս չինարիները, որոնց մոտ մենք *իրար սիրտ առանք* (ՍԱԵՅ – 182):

14. Դերանուն + տրական հոլովով գոյական. օրինակ՝ *իր ուսերին* առնել,

այսպես՝ Նստեց, էլի, աթոռը նրա համար է, որպեսզի *իր ուսերին առնի* անհասկացալիորեն ծանրացած քո մարմինը... (ԱԵ1 – 352):

15. Կապ + կապվող բառ. օրինակ՝ *ափերի մեջ առնել, աքցանի մեջ առնել, իր մեջ առնել, իր վրա առնել, թևի տակ առնել, կրակի տակ առնել* և այլն. ինչպես՝ – ճիշտ ես ասում,– ծունկի գալով օթոցի առջև և երկու ձեռքով գլուխս իր փոքրիկ *ափերի մեջ առնելով*, հարցնում է Հասմիկը... (ՀՄԱԶՀԶ – 596): Իսկ եթե քրդերը չհամաձայնեին չեզոք մնալ, գունդը մտնելու էր Զխուր, Սմբատի զորախմբի հետ *աքցանի մեջ պիտի առնեին* քրդական համիոյեն, ցրեին, հետո հարձակվեին Մյուրսել փաշայի դիվիզիայի վրա (ՀՄԱԶՀ1 – 244): ...այդ ամբողջը մեզ քաշում *իր մեջ էր առնում*, մեզ խեղդում էր (ՀՄՍ – 263): ...Հայկական հրաձգային Հինգերորդ գունդը...Իգդիրից անցել էր Արաքսի ձախ ափը և *իր վրա պիտի առնեի* թուրքական զորքերի գլխավոր հարվածը (ԲՈՒՄ – 185): Ասկյարների ու ոստիկանների երեք հարյուր հոգուց բաղկացած զորամասը...*կրակի տակ էր առել* գրեթե ողջ Այգեստանը (ԶՂԱՎ – 510):

Շարահյուսական տեսանկյունից եռաբաղադրիչ դարձվածային միավորները կարելի է բաժանել հետևյալ խմբերի<sup>1</sup>:

1. կապակցություններ, որոնցում *առնել* բայը կապակցվում է մեկ համադաս այլ խոսքի մասի և մեկ ստորադաս բաղադրիչի հետ<sup>2</sup>. օրինակ՝ *սիրտը լեզու առնել, աստված հոգին առնել, ոտքը քարին առնել, զնդակը գետին չառնել* և այլն: Այսպես՝ Սոնայի *սիրտը* իր դեմքի վրա *լեզու էր առել*... (ԱԻԵԺ4 – 321): Ասում են, թե սա տերտերների պես աղոթում է, որպեսզի *աստված* ունևորների *հոգին* շուտ *առնի* ու ինքը հաց ունենա (ՀՄԱԶՀԶ – 237):

2. Կառույցներ, որոնցում *առնել* բային ստորադասավոր բաղադրիչն ունենում է իրեն ստորադասավոր մեկ այլ անդամ: Օրինակ՝ *վառողի հոտն առնել, ծտից թև առնել, մահվան շունչն առնել, արյան հոտ առնել* և այլն: Ինչպես՝ *Մահվան շունչն առած* հասակավորներ են՝ որ վախեցած կասկածով են նայում գործակատարի գեղջկորեն դանդաղ ու կոպեկը կոպեկին արդար առուտուրին... (ՀՄՍ – 309): ...այս խաղաղ առավոտը որտեղից *ես արյան հոտ առնում*... (ԶՂԱՎ – 221):

3. Դարձվածային միավորներ, որոնցում *առնել* բային ստորադասվում են մյուս երկու բաղադրիչները: Օրինակ՝ *միջոցներ ձեռք առնել, ձեռք վեր առնել, բերանը ցուր առնել* և այլն: Այսպես՝ եթե իհարկե, Վեհիբը չի ծիծաղել քամի կուլ տված հայ պատվիրակի վրա՝ Սարդարապատի համար *բերանը ցուր առած*՝ Դարաքիլիսայի նահատակությունը գովելով (ԲՈՒՄ – 533):

<sup>1</sup> Խոսքը չի վերաբերում կապ + կապվող բառ + բայ կաղապարով կառույցներին:

<sup>2</sup> Կապակցության առաջին բաղադրիչը *առնել* բայի հետ լինում է համադաս, իսկ երկրորդը՝ ստորադաս հարաբերության մեջ:

4. Այս խմբի մեջ առանձնացրել ենք այն կապակցությունները, որոնցում *առնել-ը* կառույց է կազմում մեկ այլ բայի և գոյականի հետ. դրանցում բայի հետ *առնել-ը* ունենում է համադասական, իսկ գոյականի հետ՝ ստորադասական հարաբերություն՝ *գլուխն առնել կորչել, գլուխն առնել փախչել, խոսք տալ-առնել* և այլն: Այսպես՝ Բայց Արշակը մնացել էր իր ասածին ու նույնիսկ սպառնացել էր, թե՛ կամ Մալաքը, կամ էլ *գլուխս կառնեմ կկորչեմ* (ԱԵ1 – 80): Եվ ո՞ր սատանան է սրան այստեղ բերել, այս ճակատագրական պահին, երբ մարդիկ աշխատում են *գլուխն առնել փախչել* այս դժոխքից, չգիտեն (ՅՄԱԶՅ1 – 408): Յլա որ մի երկու ամիս առաջ ասած լինեին էդ ոչ ու փչերը, կերթայինք *խոսք կտայինք-կառնեինք* ու աշնանը Գուշոյիս գուռնեն կփչեինք.... (ԱԵ1 – 472):

**Բազմաբաղադրիչ կապակցություններ:** Երկբաղադրիչ և եռաբաղադրիչ կապակցություններին քանակային առումով զգալիորեն զիջում են երեքից ավելի բաղադրիչներով կազմված դարձվածային միավորները: Սրանց մեջ էլ համեմատաբար շատ են քառաբաղադրիչ կառույցները: Օրինակ՝ *աշխարհարարատ մեկ գրոշի չառնել, աշխարհը թևի տակ առնել, ատամի տակ բան առնել, արցունքը կոկորդին դեմ առնել, երեսը դեռ ածելի չառած, գույն տալ, գույն առնել* և այլն: Ինչպես՝ Ա՛խ, Ծովհնարս էստեղ էղներ, *աշխարհարարատ մեկ գրոշի չէի առնի....* (ԱԻԵԺ4 – 33): Շաթիրյանին այդ օրը վիճակված էր շարունակ *գույն տալ, գույն առնել*՝ Պարույրի ճակատային գրոհին նա դիմադրել չէր կարող.... (ԱԵ1 – 290): Իսկ մյուսը, որ երևի տարիքով նրանից փոքր էր՝ *երեսը դեռ ածելի չառած*, գեղեցիկ, հպարտ կանգնել էր՝ ձեռքի գնդացիորը շալակին (ԲՈՒՄ – 426):

Չինգ և ավելի բաղադրիչներով կազմված կառույցները այնքան էլ շատ չեն: Դրանցից են՝ *քնի հրեշտակը յուր գիրկն առնել, աջով տվածը ձայնով ետ առնել, մկան ծակը հագար թումանով առնել* և այլն: Այսպես՝ Չետգիտես Գագիկի աչքերը ծանրացան և *քնի հրեշտակը* նրան *յուր գիրկն առավ* (ԲԱԱԵԱԿ – 297):

Այսպիսով, *առնել* բայը դարձվածակազմական կարևոր դեր է կատարում ժամանակակից հայերենում՝ կազմելով նորանոր դարձվածային միավորներ:

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՐԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ**

- ԱԵ1 – Աղավնի, Երկեր երկու հատորով, հատոր 1, Երևան, 1981:
- ԱԻԵԺ4 – Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու, 6 հատորով, հատոր 4, Երևան, 1975:
- ԲԱԱԵԱԿ – Բագրատ Այվազյանց, Աշոտ Երկաթ, Անհի կործանումը, Երևան, 1964:
- ԲՈՒՄ – Բագրատ Ուլուբաբյան, Սարդարապատ, Երևան, 1988:
- ԶԴԱԿ – Զարգանդ Դարյան, Արծիվ Վասպուրականի, Երևան, 1965:
- ՀԽԵՍ – Հայկ Խաչատրյան, Երվանդ Սակավակյաց, Երևան, 1989:
- ՀՂՈԵ – Հովհաննես Դուկասյան, Ոսկան Երևանցի, Երևան, 1988:
- ՀՄԱԶՀ1 – Հարություն Մկրտչյան, Անհայտ զինվորի հիշատակարանը, գիրք առաջին, Երևան, 1969:
- ՀՄԱԶՀ2 – Հարություն Մկրտչյան, Անհայտ զինվորի հիշատակարանը, գիրք երկրորդ, Երևան, 1973:
- ՀՄԱԶՀ3 – Հարություն Մկրտչյան, Անհայտ զինվորի հիշատակարանը, գիրք երրորդ, Երևան, 1975:
- ՀՄԵ2 – Հրանտ Մաթևոսյան, Երկեր երկու հատորով, հատոր 2, Երևան, 1985:
- ՀՄՏ – Հրանտ Մաթևոսյան, Տերը, Երևան, 1983:
- ՄԳԲ – Մուշեղ Գալշոյան, Բովտուն, Երևան, 1982:
- ՊՊ – Պերճ Պռոշյան, Երկերի ժողովածու 7 հատորով, հատոր 1, Երևան, 1962:
- ՍԱԾՀ – Սուրեն Այվազյան, ճակատագիրն հայոց, Երևան, 1989 - ՍԱԾՀ::
- ՍԽՄՍ – Սերո Խանգադյան, Մխիթար սպարապետ, Երևան, 1963:
- ՎԱԵ – Վախթանգ Անանյան, Երկեր 4 հատորով, հատոր 4, Երևան, 1984:
- ՎՊԸԵ1 – Վարդգես Պետրոսյան, Ընտիր երկեր 2 հատորով, հատոր 1, Երևան, 1983:

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

1. Մարգարյան Ա. Ս., Ժամանակակից հայոց լեզու (բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն), Երևան, 1990:
2. Ջահուկյան Գ. Բ., Աղայան Է. Բ., Առաքելյան Վ. Դ., Քոսյան Վ. Ա., Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Երևան, 1980:
3. Սուքիասյան Ա. Մ., Ժամանակակից հայոց լեզու (Հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Երևան, 1999:
4. Սուքիասյան Ա. Մ., Գալստյան Ս. Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975:



**ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ ВОЗМОЖНОСТИ ГЛАГОЛА «սնել»  
В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЗЫКЕ**

**ПОГОСЯН А. Ж.**

**РЕЗЮМЕ**

Подавляющее большинство фразеологизмов современного армянского языка являются глагольными образованиями.

Среди глаголов выделяется глагол «սնել», который наличествует в составе около 300 фразеологизмов.

В статье обсуждаются идиоμοобразующие возможности указанного глагола и как основного составляющего фразеологизма, и как дополняющего смысл основного составляющего, т.е. как второстепенного члена.

**THE MANIFESTATIONS OF THE VERB «սնել»  
IN MODERN ARMENIAN PHRASEOLOGICAL UNITS**

**A. POGHOSYAN**

**SUMMARY**

The vast majority of Modern Armenian phraseological units are verbal.

Among all other verbs «սնել» possesses a wealth of possibilities of forming phraseological units. It can form nearly 300 phraseological units.

The article touches upon certain possibilities of forming phraseological units with the verb «սնել». It can either be the semantic centre or a secondary member of the phraseological unit.